

ների վերականգման մեթոդիկա դասընթացները: 1945 թ. նշանակվելով ամբիոնի վարիչ, նա անընդմեջ, մինչև 1990 թ., պաշտոնավարել և ստեղծել է ազգային ավանդույթներով հարուստ ճարտարապետության ամբիոն: Տարիների դասախոսական այս աշխատանքից են ծնվել Վ. Հարությունյանի «Հին աշխարհի ճարտարապետություն» (Երևան, 1978) և «Հայկական ճարտարապետության պատմություն» (Երևան, 1992) դասագրքերը: Ճարտարապետական հուշարձանների վերականգման մեթոդիկայի դասագիրքը նույնպես հասցվել է ավարտին և սպասում է իր հրատարակությանը:

Բովանդակալից են Հարությունյանի մասնագիտական դասընթացները: Նրանք տասնամյակներ շարունակ օժանդակել են հայաշունչ ոգով դաստիարակելու ճարտարապետների բազմաթիվ սերունդների, ինչպես նաև՝ Վ. Հարությունյանի ղեկավարությամբ հայրենիքի և Սփյուռքի ճարտարապետության բարձրագույն կուրսերն անցած և թեկնածուական ու դոկտորական աստիճաններ հայցած շուրջ երեք տասնյակ հայկական մասնագետներին: Ճարտարապետների համար գրադարան դարձած Վ. Հարությունյանի աշխատասենյակի դարակներում եղած բազմահարյուր նամակները հայ ճարտարապետների գործունեության հանրագիտարան են, նրանց ծալքերում նախորդ տասնամյակների խոսուն անցյալն է:

Վ. Հարությունյանի գիտական վաստակը բազմազան է: Ճարտարապետական կրթությունից հետո, 1939 թ. սկսվող Պատմության և հնագիտության ինստիտուտի ասպիրանտական տարիները և Դվինի հնագիտական պեղումներին մասնակցությունը դառնում են նրա գիտական մկրտության շրջանը: Պատերազմից անմիջապես հետո, 1946 թ., «Դվինի 5-7-րդ դարերի պատմաճարտարապետական հուշարձանները» թեմայով նա հայցում է թեկնածուի գիտական աստիճան և ստանում դոցենտի կոչում: 1964 թ. պաշտպանելով «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական մշակույթը» վերնագիրը կրող ատենախոսությունը, արժանանում է գիտությունների դոկտորի աստիճանի: Նույն տարում ստանում է նաև պրոֆեսորի կոչում: Գիտնականի գրադարանն այսօր ծանրաբեռնված է տպագրված և չտպագրված բազմաթիվ ուսումնասիրություններով: Չնայած առաջացած տարիքին, վերջին տարիներին նա իր գործունեության ամենաակտիվ շրջաններից մեկն է բոլորում: «Հայկական ճարտարապետության պատմություն» ծանրակշիռ աշխատության հրատարակությունից հետո, 1994 թ. նրա աշխատությունների ցանկը հարստացավ ևս 8 գրքերով՝ «Մակարավանք» (Հայկական ճարտարապետության վավերագրերի 22-րդ պրակ, հեղինակակից՝ Ֆ. Գանդուլֆո, Միլանո,

1994), «Նախնյաց ոտնահետքերով» (Ս. Էջմիածին, 1995), «Բոսֆորի և Մարմարայի ափերով» (Երևան, 1996), «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները» (Ս. Էջմիածին, 1996), «Երևանի եկեղեցիները» (Երևան, 1997), «Անմոռաց հանդիպումներ» (Երևան, 1998), «Կյանքիս քառուղիներում» (Երևան, 1999) գրքերը և արդեն պատրաստ է հրատարակության «Աշխարհի ճամփաներով» հատորը, որ բովանդակում է մասնագետի տարբեր տարիների այցելությունները ճարտարապետության համամարդկային քաղաքակրթության կոթողներին: Վ. Հարությունյանը հեղինակ է երկու տասնյակ հրատարակված գրքերի¹, շուրջ երեք հարյուր գիտական հոդվածների և նույնքան հրապարակախոսական հոդվածների և գիտական զեկուցումների²:

Վ. Հարությունյանի աշխատություններին բնորոշ է ճարտարապետության անգամ բարդագույն հասկացությունները պարզ և մատչելի կերպով ներկայացնելու զարմանալի ունակությունը: Նրա պատմական աշխատություններին բնորոշ է տեսական հագեցվածությունը: Մեթոդաբանական առումով նա ճարտարապետության զարգացումը

¹ Կարևորագույն գրքերն են. «Դվինի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1950), «Հայկական ճարտարապետության հուշարձանները» (հեղինակակցությամբ Ս. Ա. Սաֆարյանի, Մոսկվա, 1951, ռուսերեն), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (հեղինակակցությամբ Կ. Լ. Հովհաննիսյանի, Երևան, 1955, ռուսերեն), «Էջմիածին» (Մոսկվա, 1958, ռուսերեն), «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» (Երևան, 1960), «Անի քաղաք» (Երևան, 1964, ռուսերեն), նույնը նաև հայերեն, «Երևան» (հեղինակակցությամբ՝ Ս. Ս. Հասրաթյանի, Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1968, ռուսերեն), «Հայ ճարտարապետության պատմության մի քանի հարցերի մասին – պատասխան Զուբինաշվիլու գրքին» (հեղինակակցությամբ՝ Բ. Ն. Առաքելյանի և Ստ. Սնացականյանի, Երևան, 1968, ռուսերեն), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (հեղինակակցությամբ՝ Ս. Ս. Հասրաթյանի և Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1972), «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» (Բեյրութ, 1975, հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով), «Հին աշխարհի ճարտարապետություն» (Երևան, 1978), «Հայրենի կոթողների նոր ճակատագիրը» (Երևան, 1982), «Թորոս Թորամանյան» (Երևան, 1984), «Հայկական ճարտարապետության քարակերտ տարեգրությունը» (Երևան, 1985), «Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը» (Երևան, 1986)», «Եկայք շինեսցուք՝ Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տարիների շինարարական գործունեությունը» («Երեբունի» հրատարակչություն, 1989) և այլն:

² Հմմտ. Վարազդատ Հարությունյան, Բիբլիոգրաֆիա (1924-1981), Երևան, 1982: Ընդհանուր տվյալները դուրս են բերվել Վ. Հարությունյանի հրատարակության պատրաստված ընդհանուր բիբլիոգրաֆիայից:

պատկերում է սոցիալ-պատմական փոփոխությունների ընդհանուր համապատկերում,։ Այս հանգամանքով են պայմանավորված նրա կողմից բարձրացված հայկական ճարտարապետության յուրահատուկ զարգացման տեսությունները, որոնք արտահայտվել են՝ «Հայկական ճարտարապետության ձևերի ժառանգորդական զարգացման օրինաչափությունները», «Վաղ միջնադարյան Հայաստանի պալատական կառույցների ժողովրդական ճարտարապետության ակունքները» և «Զարգացած միջնադարի աշխարհիկ ճարտարապետության ժողովրդական աղերսները ու նրանց կոնստրուկտիվ հնարքների ձևատեղծման ոլորտները» և մի շարք այլ գործերում։ Այս բոլորը հստակորեն մեկնաբանված են նրա կոթողային աշխատության՝ «Հայկական ճարտարապետության պատմության» էջերում։

Պրոֆեսոր Վ.Հարությունյանի մանկավարժական, հրապարակախոսական ու գիտահետազոտական կյանքը նրա հասարակական գործունեության անքակտելի մասն է։ Սկսած երիտասարդ տարիներից մինչև օրս վարել և վարում է զանազան պաշտոններ։ Եղել է Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի դեկան՝ 1938-39 թթ., նույն ինստիտուտի ուսումնական մասի վարիչ՝ 1942-45 թթ., կառավարությանն առընթեր ճարտարապետական վարչության պետի տեղակալ՝ 1945-48 թթ., Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ՝ 1945-51 թթ., Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի պատմության սեկտորի վարիչ՝ 1951-1953 թթ.։ Առավել ծանրակշիռ է Հարությունյանի գործունեությունը Հայաստանի ճարտարապետների միությունում, որի նախագահի տեղակալն է եղել 1949-62 թթ. և նախագահը՝ 1962-74 թթ.։ Եղել է նաև Հայաստանի Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի (1964 թվականից), Գիտելիք և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի (1951թ.-ից) ընկերությունների վարչությունների անդամ։ Նա Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիրներից է։ Եղել է միության նախագահը՝ 1981-90 թթ., և պատվո նախագահը՝ 1990-ից։

Պրոֆեսոր Հարությունյանը մեծ վաստակ ունի հայրենական պատմաճարտարապետական կոթողների նոր կյանքի կոչման ու նորերի հիմնադրման բնագավառում։ Նա հասարակական հիմունքներով 1964 թվականից, սկզբում նախագահի տեղակալի և ապա նախագահի պաշտոններով, ղեկավարում է Հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը՝ այս ընթացքում հրատարակելով պատմաճարտարապետական տարբեր հուշարձաններին նվիրված շուրջ 70 գիտահանրամատչելի բրոշյուրներ և բուկլետներ։ Նրա նախաձեռ-



Երջանկահիշարակ Գարեգին Ա Վեհափառ Նայրապետը բազմավաստակ գիտնականի կուրծքը զարդարում է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով

Նշված և այլ պարգևատրումները 1996 թ. Վ. Հարությունյանի կյանքում պսակվեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Ակադեմիկոսի կոչման շնորհմամբ: «Դեռևս անելիքներ չատ կան» - ասում է ու շարունակում գրել հայկական ճարտարապետության երախտավորը: Բազմաթիվ կուտակված թղթերի խրճերի մեջ Վ. Հարությունյանի աշխատասեղանի մի անկյունում նկատելի է ապագա աշխատությունների ցուցակը՝ «Կյանքիս քառուղիներում»՝ 2-րդ հատոր, «Աշխարհի ճամփաներով»՝ 2-րդ հատոր, «Որպեսզի հարատևեն - պատմական հուշարձանների պահպանության վերաբերյալ աշխատությունների ու հոդվածների ժողովածու», «Հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինություն», «Խոսք արվեստակից ժամանակակիցներիս մասին»:

Մաղթենք կորով և ծրագրերի իրականացում անվանի գիտնականին: